

Նախագահ Արմեն Սարգսյանը ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի հյուրն էր

ԵՐԵՎԱՆ, 4. 12. 2018 Թ. - ՀՀ նախագահ **Արմեն Սարգսյանը** և նախագահի տիկին, մանկագիր **Նունե Սարգսյանը** դեկտեմբերի 4-ին մեկնեցին Լոռու մարզ՝ այցելելու Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՈԱՖ) **ՍՄԱՐԹ կենտրոն**:

Արդեն կես տարի գործող կենտրոնում նախագահն ու տիկին Սարգսյանը շրջայց ունեցան՝ ծանոթանալով գյուղաբնակ երեխաներին ու մեծահասակներին առաջարկվող դասընթացներին՝ երաժշտություն, պար, նկարչություն, ակտիվ քաղաքացիություն, լեզուներ, ծրագրավորում, ռոբոտիկա:

Ոգևորելով ռոբոտիկայի խմբակի սաներին՝ նախագահը նկատեց. *«Դուք ոչ թե պարզապես լեզո եք հավաքում, այլ Ձեր ապագան եք կառուցում: Հնարավոր է, որ հենց դուք ապագայում ստեղծեք տրակտորներ, որոնք մենք կկիրառենք Հայաստանում, և չենք ներկրի այլ երկրներից»:*

Նախագահ Արմեն Սարգսյանը տպավորված էր կենտրոնով: Նա վստահեցրեց, որ իր այցելած որևէ երկրում նման կենտրոն երբևէ չի տեսել: Նա հորդորեց կենտրոնի սաներին հպարտանալ ու գիտակցել, որ իրենք Հայաստանի հպարտ քաղաքացիներ են:

Կենտրոն հաճախող երեխաներից շուրջ երկու հարյուրը դիմավորեցին Հայաստանի դեկավարին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի՝ Անդրեա Մարտինի անվան կատարողական արվեստի լսարանում:

«Նյու Յորքի միլիոնավոր երեխաներ կերազեին նման կենտրոն ունենալ: Այնքան եմ հավանում այս կենտրոնը, որ սկսելու եմ շուտ-շուտ գալ, որովհետև իմ տունը միայն Երևանը չէ, այլև Վանաձորը, Դեբետը, Դսեղը... Անառային արձակուրդներին թռնիկներիս էլ կբերեմ այստեղ»,- տպավորությունները կիսեց նախագահ Արմեն Սարգսյանը:

Ջերմ ու անկաշկանդ հարց ու պատասխանի ընթացքում կենտրոնի Մեդիագրագիտության խմբակ հաճախող պատանիները հնարավորություն ունեցան փոքրիկ, ոչ ստանդարտ հարցեր ուղղել նախագահ Սարգսյանին, օրինակ՝ *«Ո՞վ է Հայաստանի լավագույն ՍՄԱՐԹ քաղաքացին»*, ինչին նախագահը պատասխանեց՝ *«հենց Դուք»:*

Հանդիպման վերջում նախագահ Արմեն Սարգսյանը և տիկին Նունե Սարգսյանը գրքեր նվիրեցին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի սաներին: Իրենց հերթին, երեխաներն իրենց ձեռագործ աշխատանքները՝ որպես հուշանվեր, փոխանցեցին երկրի դեկավարին:

«Այսօրվա այցը ևս մեկ անգամ ընդգծում է ՔՈԱՖ-ի բազմամյա գործունեության արդյունքը, և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնն այդ գործի պսակն է: Նկատի ունենալով նորարարական տեխնոլոգիաների կարևորությունը Հայաստանի զարգացման համար, ինչի մասին նախագահ Արմեն Սարգսյանը նշել է Ֆրանկոֆոնիայի տնտեսական ֆորումի բացման խոսքում, մեզ համար առանցքային է դառնում գյուղաբնակ երեխաների համար կրթության հավասար հնարավորությունը հենց: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի առանձնահատկությունն այն է, որ այն առաջարկում է ոչ միայն տեխնոլոգիական, այլ հատկապես բազմամասնագիտական կրթություն՝ բացելով լայն և ընդգրկուն հեռանկարների գյուղերի երեխաների ու երիտասարդների համար», - ասաց Հայաստանի մանուկներ հիմնադրամի Գործընկերությունների և միջոցառումների համակարգման տնօրեն **Իրինա Իգիթյանյանը**:

* * *

[Հայաստանի մանուկներ հիմնադրամը \(COAF\)](#) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: